

Փ Ո Ւ Ի Ն Ձ

Օ Ր Ա Գ Ի Ր

Թիւ 256

ՀԻՆԳՇԱՐԹԻ

1869 ՓԵՏՐՎԱՐ 43

Ամեն օր կրատարակուի : — Հասար 10 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիս պիտի վճարէ 100 թուոյ համար իսկ դաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոյ համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման ստորը 40 փարայ է մէկ անդամի համար : — Արագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Առաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից նոր Գրատունը :

ԱՂԳԱՅԻՆ

Պաշտօնական Յայտարարութիւն
Խառն Ժողովոյ

Կոստանդնուպօլսոյ զանազան թաղերու թաղական խորհուրդները հրաժարած ըլլալով, անանց տեղ նոր թաղական խորհուրդներ կազմելու համար, Խառն Ժողովը նկատելով որ մինչև վերաքննեալ Մահմանադրութեան հաստատութիւնը ամեն անգամ ինչ պաշտօն առժամանակեայ է,

Նկատելով որ ըստ իւր բաղձանաց Մահմանադրութիւնը ընդ հուսկ պիտի կրնայ վերահաստատուել,

Նկատելով որ Մահմանադրութեան վերահաստատութեանը հետքնականաբար ամեն ժողով ու խորհուրդ նորէն պիտի կազմուի սահմանադրապէս ընտրութեամբ,

Արդեայ որ նոր հաստատուելիք թաղական խորհուրդները առժամանակեայ թաղական խորհուրդ անուանով Խառն Ժողովոյ կազմէն ընտրուին :

12 Փետրվար . 1869

Ի Պատր . Հայոց . Կ. Պօլիս :

Այս որոշման վրայ, կրտսէք թէ՛ երէկ Բերայի համար թաղական առժամանակեայ խորհուրդ մը կազմուեր

է, որոյ անդամք են (այբբենի կարգաւ)

Մանուէլ Արայ Գալաֆեան	»	Միւհէնտիսեան
Մարտիրոս	»	Արվաճեան
Միւքայէլ	»	Գարսղաչեան
Յակոբ	»	Թաղաւորեան
Յարութիւն	»	Կիւմիւշկէրտանեան
Տիգրան	»	

— Դատատանական նորընտիր խորհրդականք երէկ սկսան իրենց պաշտօնը վարել :

Հռոմէականութենէ Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյն գիրկը դարձող Տիգրան անուն անձմը՝ երէկ յիշեալ խորհրդոյն ազերսաղիր մատուցանելով, խնդրեր է որ իր մարտնի ժառանգութիւնն եղող 2200 դոնստիտէն Հռոմէականաց Պատրիարքարանէն հանուելով իրեն յանձնուի կամ ուրիշի մը քով աւանդ դրուի :

Լսածնուս նայելով, Տիգրան անգամ չէ որ այս խնդիրը կրնէ եղեր : Շատանց ի վեր իր առունքը ձեռք բերել կուզէ, բայց մինչև ցարդ յաջողած չէ եղեր : Եթէ ստոյգ են մեզի տրուած տեղեկութիւնները, կայսերական բարձրագոյն դատարանէ մը վճիռ կայ Տիգրան աղային ձեռքը, որով Հռոմէա-

կան Պատրիարքարանը պարտաւոր
եալ է իր քովը եղած դոնտայիանե-
րը ախրովը յանձնելու , բայց յիշեալ
Պատրիարքարանը դէմ կիկենայ եղեր ,
պատճառելով թէ Տիրբան ազգային
մայրը կտակ ըրած է որ Հռոմէական
Պատրիարքարանը մնայ :

Մեր Պատրիարքարանին պարտքն
է ողւով չափ աշխատել այս խնդրոյն
ժամ յառաջ կարգադրութեան հա-
մար : Յիշեալ անձն Հայաստանեայց ե-
կեղեցւոյ դիրկը դառնալովը միթէ
յանցաւոր եղած կըլլայ , և միթէ իւր
ժառանգական արդար իրաւունքէն
զրկուելու կրնայ դատապարտուիլ :
Եթէ արդարեւ հանգուցեալ մօրը կող-
մանէ այս մասին կտակ մ'ալ եղած
ըլլայ , մեր Պատրիարքարանն ըլլալու
է կտակակաւարը , քանի որ Տիրբան
աղան Հայաստանեայց եկեղեցին և Հայ
Պատրիարքարանի իրաւասութեան
տակ կզանուի : Այսպէս կհաստատէ
եզեր անոր ձեռքը եղած բարձրա-
դոյն վճռագիրն ալ :

Դատաստանական խորհուրդն ե-
թէ այս խնդիրը շուտով կարգադրե-
լու կարող ըլլայ , ազգին մեծ բարեք
ըրած կհամարուի ըստ որում ազա-
ցուցած կըլլայ թէ Հայոց Պատրիար-
քարանը ձեռնհաս է Հայոց իրաւունք-
ները պաշտպանելու :

—Ահաւաստիկ կիլիկիոյ վիճակները
զրկուած շրջաբերական կոնդակին օ-
րինակը :

ՅԵՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԵՐ Ա-
ՐԻՍԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ և չորհիւ-
Սրբոյ Հոգւոյն Տեղապահ պատրիարքա-
կան Աթոռոյն Կոստանդնուպօլսոյ : Յորմէ
Աստուածային Սուրբ ողջունիւ և օրհ-
նութեամբ գիտութիւն լիցի կիլիկիոյ ա-
մենայն Տիրախնամ վիճակաց , Գերազա-

աիւ Առաջնարդաց , Հոգիհորն Եպիսկո-
պոսաց , խոհեմազարգ Վարդապետաց ,
Սրբակրօն Քահանայոց , Հոգեսէր իշխա-
նաց և համայն բարեպաշտ ժողովրդոց
Սիրելեաց մերոց ի Տէր :

Ստեցի Նիկողայոս Եպիսկոպոսի վե-
րադարձին նկատմամբ ինչպէս կը լսուի
դոնաշան սխալ տարածայնութիւններ կայ-
այս սխալմունքը ուզելու համար խոր-
հրդով խաւն ժողովոյ Պատրիարքարանիս
արժան գատեցաք Պաշտօնական կերպիւ-
ճանուցանել ի տեղեկութիւն մանաւանդ
Կիլիկիոյ վիճակին Օրհնեալ ժողովրդոց ,
թէ Քործարոյն դուք միայն հաւանու-
թիւն տուած է յիշեալ Ստեցի Նիկողայոս
Եպիսկոպոսին իր Հայրենի երկրին մէջ
բնակելու . բայց Կաթողիկոսութեան
խնդիրը կախ ձգած է յարգելով Ազգային
իրաւասութիւնը : Ըսել է որ Նիկողայոս
Եպիսկոպոս ո'չ Ազգային վարչութիւնէն
Կաթողիկոս հաստատուած է եւ ո'չ Մե-
ծադոր տէրութիւնը ըստ այնմ վաւերա-
ցուցած է զայն , Հետեւաբար Նիկողայոս
Եպիսկոպոս Կաթողիկոսական ամեն
առանձնահոյսութիւններէ դուրկ ըլ-
լալով կարող չէ ո'չ Եպիսկոպոս ձեռ-
նադրել , ո'չ Սուրբ մեռոն օրհնել , եւ ո'չ
Սուրբ աթոռոյն ստացուածոցը տէր ըլ-
լալ : Իսկ կիլիկիոյ Սուրբ Աթոռը տակա-
ւին իր կառավարութիւնը պիտի ունենայ
ասիլէ ստաջ Տեղապահ հաստատուած Գե-
րապատիւ Հաճընու Պետրոս Եպիսկոպո-
սին Նիկողութեանը տակ , եւ այսպէս պի-
տի շարունակուի մինչեւ որ Ազգային վար-
չութիւնը կիլիկիոյ Կաթողիկոսութեան
խնդիրը լուծէ օրինաւոր կերպիւ :

Այս պաշտօնական յայտարարութիւ-
նը Օրհնութեան կոնդակաւ ծանուցանե-
լով կիլիկիոյ Տիրախնամ բոլոր վիճակաց
Եկեղեցական և ժողովրդական լրութեան,
կը մագլթեմք ամենեցուն համար երկա-
ւոր և երկրաւոր յաջողութիւնս , եւ մը-
նամք աղօթներար միշտ :

Պ. Տեղապահ
Արքեպիսկոպոս Եպիսկոպոս

Տուաւ Օրհնութեան Կանգակս ի սրտա-
րիարքարանէ Հայոց, որ ի Կ. Պօլիս, յա-
մի Տեան 1869 ի փետրուարի 1:

Ասոր մեջ գանուած քէր բառք
անբառան հատկնալու է, ըստ որում
կաթողիկոսունք, վանականք և սյրք
ազգային ստացուածոց աւանդապահ-
ներն են և չէ թէ աէրերը: Այս առ-
թիւ այս դիտողութիւն ընել պէտք
է, որպէս զի չըլլայ թէ ժամանակ
անցնելէն յետոյ կաթողիկոս կամ վա-
նահայր մը այս պաշտօնական գրք-
ուածն իրեն վահան առնելով՝ ազ-
գային ստացուածոց իբրև աէր կե-
նայ և զանանք ուղածին պէս առնէ
ծախէ: Կաթողիկոսաց կամ վանա-
հարց սրբազան և անհրաժեշտ պարտքն
է ազգային ստացուածոց արդիւնա-
ւորութեան ու զարդացման հոգ տա-
նիլ, և մէկ էսօսքով՝ իբրև աւանդ-
հսկել անոնց վրայ:

Ի ԱՌՆ ԼՈՒՐՆԸ

Կարնոց կուսակալութեան կեդ-
րնական (մէրքեղ) Միւթէսարքի
անուանեցաւ Մարաշի նախորդ գայ-
մնոսամ թէվիլիզ վաշա:

—Շղօսարայի կուսակալութեան
կեդրնական Միւթէսարքի անուա-
նեցաւ Սալի Բիզա պէյ, որ այս պաշ-
տօնով կարին կգանուէր:

—Կրսուի թէ՛ Սելանիկի կուսա-
կալութեան ընդհանուր կառավարի-
չը՝ Դանուբեան կուսակալութեան,
և Շուրայի—Տէվլէթի անդամ Սապրի
վաշան՝ Սելանիկի ընդհանուր կառա-
վարիչ պիտի անուանին:

—Կրսեմք թէ՛ ոստիկանութեան
փոխմ, պաշտօնեայն մնադիր է նոր
Մազիր մը հաստատել, ոստիկանու-

թեան վերաբերեալ փոփոխութիւննե-
րը՝ վարձատրութիւններն ու պատիժ-
ները և հասարակաց օգուտ ընծա-
յող գէպքերն հրատարակելու հա-
մար, ինչպէս Եւրոպայի շատ կողմե-
րը սովորութիւն է:

—Թունուսի Եւրոպական հիւպա-
տոսները խափա բողոքեր են յիշեալ
երկրին իշխանութեան, անցեալ տա-
րի անիրաււարար 17 հրեայ սպան-
ուած՝ և յանցաւորներուն մինչև հի-
մա անպատիժ մնալու համար:

—Փարիզէն լուր կուտան թէ գեո-
պանաժողովը իւր վերջին նստին մէջ
չատ թախանձեր է ճէմիլ վաշայի, որ
պէս զի Յունաստան ապաւինող կրե-
տացիք որ այժմ հայրենիք դարձած
են, չմնասուին:

—Վիեննայի մէկ լրագիրը սուս
կհանէ այն լուրը՝ սրով կրսուի թէ
Տէլիեանի շրջաբերական մը բրած ըլ-
լայ: Բայց կանգ է սր Ռանկապէի գիր
մը ուղղուած կայ որ գեսպանաժողո-
վոյն աշխատութիւնը քննադատու-
թեան կառնէ: Այս գիրը գեսպա-
նաժողովոյն բոլոր անդամոց պիտի
հաղորդուէր:

—Վիեննայի հելլենական գես-
պանը Աթէնք կանչուեր է:

—Մատրիտէն լուր կուտան թէ
Սպանիոյ ազգային ժողովը կազմուե-
լով կառավարութիւնը ընդուներ է
այս ժողովոյն իշխանութիւնը: Եւ
ղովը որոշեր է շնորհակալութիւն
յայտնել աւժամանակեայ կառավա-
րութեան, և Սէրրանօի յանձներ է
խորհրդարան մը կազմել:

—Ֆուատ վաշայի մտքմիւր բար-
ձող գաղղիական շողենաւը մայրա-
քաղաքս կստատուի այսօր:

—Կրսուի թէ՛ Ֆուատ վաշայի

